## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ծառայողական շների համար անհրաժեշտ չոր կերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 14.05.2024թ. N 149/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.05.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կ.Բալայանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մխիթարյանը, Ն.Գալուստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Բալայանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԳՐԻԳՈՐ ԲՈՒՆԱՐՋՅԱՆ ՀԱՅԿԱԶԻ» Ա/Ձ-ն
2. ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ-ն
3" Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Ձ/Հ | Մասնակիցների անվանումները | Ապրանքի անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | Նախահաշվային ընդհանուր գին ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱՀ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «ԳՐԻԳՈՐ ԲՈՒՆԱՐՋՅԱՆ ՀԱՅԿԱԶԻ» Ա/Ձ | Ծառայողական շների համար անհրաժեշտ չոր կեր-1 | 11 583 000 | 0% | 11 583 000 | 11 700 000 |
| 2 | | ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ | | 550 000 000 | 20% | 660 000 000 | |
| 1 | 2 | «ԳՐԻԳՈՐ ԲՈՒՆԱՐՋՅԱՆ ՀԱՅԿԱԶԻ» Ա/Ձ | Ծառայողական շների համար անհրաժեշտ չոր կեր-2 | 1 930 500 | 0% | 1 930 500 | 1 950 000 |
| 2 | | Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի | | 2 470 000 | 0% | 2 470 000 | |
| 3 | | ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ ՍՊԸ | | 550 000 000 | 20% | 660 000 000 | |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. Առաջին տեղը զբաղեցրած «ԳՐԻԳՈՐ ԲՈՒՆԱՐՋՅԱՆ ՀԱՅԿԱԶԻ» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը, սակայն մասնակիցը 1-ին և 2-րդ չափաբաժինների համար առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հստակ չի նշել առաջարկվող ապրանքի մակնիշը:

2. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:

**5. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «ԳՐԻԳՈՐ ԲՈՒՆԱՐՋՅԱՆ ՀԱՅԿԱԶԻ» Ա/Ձ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

-Նիստը վերսկսել՝ 2024 թվականի հունիսի 3-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կ.Բալայան

Անդամներ՝ Ա.Մխիթարյան

Ն.Գալուստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան